Հայտարարություն

ՀՀ Արագածոտնի մարզի<<Զորագլխի Յու. Հովհաննիսյանի անվան միջն.դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենությունը հայտարարում է մրցույթ տեխնոլոգիայի (4 դասաժամ աղջիկների խումբ), ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները հանձնաժողով են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում՝(Ձև 1), մեկ լուսանկար 3*4 չափի,
2.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3.Անձը հաստատող փաստաթուղթ,
4. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
5. Ինքնակենսագրություն (Ձև 5),
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
8.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև դեկտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից 15-00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021թ. դեկտեմբերի 24-ին՝ ժամը 14-00-ին, Արագածոտնի մարզի Զորագլխի Յու. Հովհաննիսյանի անվան միջն. դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093-32-43-92 հեռախոսահամարով:

Դպրոցի տնօրեն Կ. Սողոմոնյան